



Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին Մեծ Պահքի չորրորդ շաբաթ օրը ոգեկոչում է Սեբաստիայում նահատակված սուրբ քառասուն մանուկների հիշատակը:

2018 թվականի մարտի 10-ին, Սեբաստացի սուրբ քառասուն մանկանց հիշատակության օրը, Թբիլիսիի Հավլաբարի Սուրբ Էջմիածին Եկեղեցում Սուրբ և Անմահ Պատարագ մատուցեց եկեղեցու հոգևոր հովիվ արժանապատիվ Տեր Վիրապ քահանա Ղազարյանը: Եկեղեցում վառվեցին ծաղիկներով զարդարված մոմերը՝ ի հիշատակ նահատակված քառասուն մանկանց:

Հընթացս Սուրբ Պատարագի, արժանապատիվ Տեր Մանուկ քահանա Զեյնալյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց օրվա խորհրդի մասին, ներկայացրեց 4-րդ դարում Լուսապսակ այս քաջ սուրբ քառասուն



մանուկների նահատակության պատմությունը, որոնք բոլորն էլ կայտառ երիտասարդներ էին: Նրանք Փոքր Հայքի տարբեր քաղաքներից էին և զինվորական ծառայության մեջ էին Սեբաստիա քաղաքի կայսերական գնդում: Ավելի խոր ու սերտ միությամբ, իբրև մեկ հոգի, քրիստոնյա հավատքի մեջ ամրացած ու զորացած, նրանք կարողացան արիությամբ, անվախ կեցվածքով դիմավորել քրիստոնյա հավատքի դեմ ուղղված սպառնալիքը, նահատակվեցին, բայց չդավաճանեցին իրենց հավատքին:



40 մանկանց պատմության օրինակով արժանապատիվ քահանան ներկաներին հորդորեց՝ կյանքի բոլոր դժվարությունների մեջ անգամ հավատարիմ մնալ Քրիստոսի հավատին, ապրել սիրով, լինել բարի ու զոհաբերության պատրաստ, հաղթահարել դյուրահաճ



